

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունուած է ամէն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ՆԵՐԿԱՅ 1891 ԹԻՍՎԱՆԻՆ

ՄՇԱԿ

ԴՐԱՎԱՆՆԵՐԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱՆԵՐ ԼՐԱԴԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպագանդայով: Մեր կը ստանանք սեփական ձեռագրերը:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կից ամսականը 6 ռուբլի.
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցներ անկիւնում, Թամարիայի տանը).
Կայսերութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանէ. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».
Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով.
Քառուս վճարում է 2 կոպեկ.
«Մշակ» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմյանիս լրագրիները յայտարարութիւնները և պաշտօնական հաստատութիւնները յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մասնացուցակի տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորսրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի:
Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վաղը կիրակի, յունիս 13-ին, կայաւորու են Թիֆլիսի Գումայի դահլիճում քաղաքացիների ընտրութիւնները: Թէ ով կընտրվի քաղաքացիական-գիւղական և առաջին գումայի, միայն այսքան կարող ենք ասել, որ քաղաքացիական պաշտօնի համար եղած բոլոր կանդիդատներից շատերը հրաժարվեցան իրանց քուէտուփը դնելուց և որքան մեզ յայտնի է՝ հաւանականութիւն ունեն ընտրված լինելու միայն երկու անձնք, այն է՝ այժմեան քաղաքացիական Ալեքսանդր Մատինով և Թիֆլիսի հաշտաբար դատաւոր Նիկոլայ Զուբալով:

ՎԱՂԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վաղը, կիրակի, յունիս 13-ին, կայաւորու են Թիֆլիսի Գումայի դահլիճում քաղաքացիների ընտրութիւնները: Թէ ով կընտրվի քաղաքացիական-գիւղական և առաջին գումայի, միայն այսքան կարող ենք ասել, որ քաղաքացիական պաշտօնի համար եղած բոլոր կանդիդատներից շատերը հրաժարվեցան իրանց քուէտուփը դնելուց և որքան մեզ յայտնի է՝ հաւանականութիւն ունեն ընտրված լինելու միայն երկու անձնք, այն է՝ այժմեան քաղաքացիական Ալեքսանդր Մատինով և Թիֆլիսի հաշտաբար դատաւոր Նիկոլայ Զուբալով:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՉ ՄՆԱՑ

Այդ միջոցին կարելի մօտ հասաւ հարկահան չափը՝ երկու դիւնարների հետ և մօտեցաւ միւլթիքին:
— Լաւ հասար, Հաջօ, ժպտաց նրան եղբայրը
— Խօքաններդ տեսարակը հետդ է:
— Հետո է:
— Տես, միշտ կողը 6 դուրուշից աւելի չը հաշոււ:
— Վեց, բացականչեց Միլիոն դադարելով չափիւլուցէ՝ էդ խօքաններդ ինչու է, այժմ քաղաքում 15 դուրուշով են տալիս կողը:
— Ինչ, ինչ, որտեղ միւլթիքիմը—15 դուրուշով... չէ մէկ, չիբերդ բաց, թո՛ւ այդ փտած ցորկի կողին սկի 5 դուրուշ էլ չեն տալ... սրան նայէ՛ք է՝ դարձաւ նա շրջապատող ուսման և դիւղայիններին—ասում է անիրաւութիւն է: Տօ, ա՛նիրաւ, դեռ չնորհակալ չես, որ ցորկեղ վեց դուրուշով աւանդ կայ: Հաջօ, դարձաւ նա եղբորդ՝ դէ որ անիրաւ ենք, 5 դուրուշից աւելի չը հաշոււ կողը: Հիմա տեսներ ինչ կասես:
— Այս, աղա, կմկմաց Միլիոն ոտքի եղնելով:
— Զայնդ, անօրէն, շանիրաւութիւնս է հա՛—հիմա ես բեղ ցոյց կը տամ անիրաւութիւնը—ախտս որ դաջերը քանդեցինք, թէ չէ դեղը թող-

երրորդ կարգի ձայնաւորների ընտրութեան ժամանակ հանդէս եկաւ մի նոր, և մինչև այսօր Թիֆլիսի Գումայի ձայնաւորների ընտրութիւնների ժամանակ չեղած մի շարժում, այն է երկու տեղական ազգութիւնների ներկայացուցիչները՝ հայերի և վրացիների փոխադարձ մրցումը: Այդ անխտրժ և քաղաքային դործերում անտեղի մրցումը այն անսպասելի հետեւանքն առաջ բերեց, որ Գումայի երրորդ կարգի ձայնաւորները մեծ մասամբ վրացիներից ընտրվեցան:
Մենք դրա դէմ ոչինչ չունենք, որ մեր Գումայի ձայնաւորների երրորդը մասը վրացիք լինէին, քանի որ քաղաքի բնակիչների թիւը կէսը հայերից, իսկ մօտաւորապէս երրորդ մասը վրացիներից է բաղկացած, բայց հարցը դրանումն է, թէ երկու ազգութիւններին պատկանող ընտրողները, չափազանցութեանը հասցնելով ազգութեան խնդիրը, սկսել են առաջ մղել այդ խնդիրը ի վնաս քաղաքի անմիջական շահերի:
Ինչպէս հայերի կողմից անտեղի և միակողմանի կը լինէր անսպասելի ցանկանալ որ թէ Գումայի բոլոր ձայնաւորները, թէ Ուլարալայի անդամները և թէ քաղաքա-

նէի մինչև ձմեռը, տես ինչպէս հոգիդ կը հանէի. չափիւր, չափիւր, չուտ արա. դէ որ անիրաւութիւն է, իրաւունքս վրա 5 կող էլ գումար կը տաս:
— Աղա, Աստուծոյ սիրուն:
— Զայնդ... անիրաւ, անիրաւութիւնս է հա՛... Եւ այդպէս բարկացած, միւլթիքիմը իր խմբի հետ մօտեցաւ Կաթինի Գաւիթի դէպքին, քանից որ քաղաքի շրջապատող դէպքի Միլիոն մի քանի կեղտոտ հայհոյանքներ արձակեց դէպքի նա և յետոյ միջոցաւ միջոցով ձայնը, ասեց Գաւիթին:
— Մաշալլահ, Գաւիթ, այս տարի լաւ բերք ունես, քանի սոմար կը լինի:
— Քանաքանա՛նք:
— Մաշալլահ, ինչ տուգան ցորեններ են:
Մի բուռ առաւ դէպքի վրայից ու քննեց:
Սակայն նրան չըջապատող խումբը հետդնտեմանում էր հասնող գիւղացիներով. մինչև իսկ երկաց մի քիւրդ, որն ուսման դեպք մի մեծ տոպրակ, խօսում էր Բասէնի վանքից ուղարկված պտղիներ ժողովողի հետ:
Այժմ ոչ ոք պակաս չէր. այդտեղ էին միւլթիքիմը, հարկահանը, պտղի ժողովողը, վաշխաւորն և մինչև իսկ քիւրդը—գիւղացու հոգեհանները:
Գաւիթը ձեռնարկեց չափելու, միւլթիքիմը և վաշխաւորն հաշուում էին, իսկ միւսները, ի թիւս որոնց և քիւրդը, ամբողջ ցորեն առնելով դնում էին և գումար բերելը:
— Ուէ, ասեց միւլթիքիմը գիւղացիներին դառնալով—շատ չոր է այս տարի ձեռք գիւղում:
— Թան կուղես, աղա, շտապեց ասելու ուսը:

գրւել անպատճառ հայոց ազգութեան պատկանէին, այնպէս էլ վրացիների կողմից անտեղի և անտակալ կը լինէր ձգտել անպատճառ վրացի ձայնաւորներ, վրացի քաղաքացիներ և Ուլարալայի վրացի անդամներ ընտրել:
Պէտք է, մեր կարծիքով, զեկավարվել քաղաքային ընտրութիւններում ոչ թէ ազգայնութեան միակողմանի գաղափարով, այլ նախ և առաջ պէտք է ի նկատի ունենալ քաղաքի շահերը: Պէտք է ընտրել ձայնաւորներ, Ուլարալայի անդամներ և քաղաքացիներ ոչ թէ այն պատճառով որ մէկը վրացի է, իսկ միւսը հայ, այլ պէտք է ընտրել ազնիւ, անկաշառ, շիտակ, ընդունակ և քաղաքային շահերին նուիրված մարդկանց, ինչ ազգութեան և պատկանէին նրանք:
Որքան լսել ենք, վրացի ընտրողները, իրար մէջ դուռնարվելով և նախապատրաստական ժողովներ կազմելով՝ նոյն իսկ այդ սխալ և հակահասարակական ընթացքն են բռնել: Նրանք առաջ են բերում պ. Զուբալովի թիկնածութիւնը, աչքի առջև ունենալով ոչ թէ այդ մարդու ճանաչված անսպասելի ազնւութիւնը, խելքը, անկողնապահութիւնը, ընդունակութիւնները, հմտութիւններն ու կենսական փորձը, այլ այն տեսակետից առաջնորդելով որ Զուբալով թէ՛ հայ-կաթոլիկ լինելով՝ ինչպէս Թիֆլիսի բոլոր հայ-կաթոլիկները, իրան վրացի է համարում:
Մենք ինքներս պ. Զուբալովին լաւ ճանաչելով, գիտենք թէ մեր քաղաքում քիչ կը գտնվի նրա պէս խելք, ազնիւ, արդար և ընդունակ մարդ, սակայն նրա համար քուէ տալու ժամանակ պ. Զուբալովը պէտք է զեկավարվեն այն քաղաքացիներ թէ մարդը արժանի է քաղաքացիների պաշտօնը վարելու և ոչ թէ ջանային վրացուն, կամ իրան վրացի համարող մարդուն ընտրել միմյանիս այն նպատակով որ նրա միջոցով կարողանային վրացիների ամեն տեսակ պաշտօններ տալ քաղաքային Ուլարալայում:
Մենք դրանով չենք ուղղում ասել թէ քաղաքացիների և Ուլարալայի անդամների բոլոր տեղերը անպատճառ հայերին պէտք է լինի, քանի որ ինքներս գիտենք որ

հայերի մէջ էլ կարող են լինել վերին աստիճանի անընդունակ և անազնիւ մարդիկ, այլ կը կամենայինք միայն հասկանալ մեր ներկայ յոգուածով այն սխալ, միակողմանի, նեղ տեսակետը, որով զեկավարվելով մեր ընտրողները բաց թողնելով գիտաւոր միտքը, այն է քաղաքի անմիջական շահը, ընկնում են երկրորդական նպատակի ետեւից, այն է որ ընտրելին անպատճառ պատկանէր այս կամ այն ազգութեան:
Վերջացնելով մեր յօդուածը մենք կը ցանկանայինք, որ վրացիք և հայերը սիրով վերաբերվէին միմեանց և լինէին համերաշխ հասարակական դործերում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՆԵԿՈՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Գինի սառցուն է: Աւելորդ չենք համարում մասնացոյց անել մի միջոցի վրա եւ, որով առանց մեծամեծ ծախսերի դիմու ալիօօլային աստիճանը կարելի է բարձրացնել: Այդ միջոցը գինի սառցուն է:
Արդէն մենք գիտենք, որ գինին ալիօօլի և ջրի խառնուրդ է գլխաւորապէս: Յայտնի է միւս կողմից, որ ալիօօլը շատ խիստ ցրտի պիտի ենթարկել, որ սառնի և մօտաւորապէս մի քաղաքաւոր տալու համար կասենք, որ երբեք այնտեղ, որտեղ վաղ են մշակում, ցորենն այն աստիճան չէ սաստկանում, որ ալիօօլը կարողանայ սառնել: Ուրեմն գինին լինելով խառնուրդ ալիօօլի և ջրի, ասելի շուտ կը սառնի, քան թէ ջուրը:
Վերջենք մի երեսը բաց անօթ, դիմով լցնենք և տանենք դուրսը դնենք մի ծածկի տակ, երբ ցորենը կը լինի—5—70 C. Առաւօտը կը նկատենք, որ գինու մի մասը սառել է, սառուց է դառել, միւսը ոչ: Սառուցը եթէ հանենք և տանենք քանակաւ, հալելուց յետոյ կը տեսնենք որ դա կատարեալ ջուր է: Պարզ է, որ ցորենը ազդում է միայն գինու ջրային մասի վրա: Մեր ցրտի տակ դրած գինու ջրային մասը բացաւ, իսկ ալիօօլը քանակութիւնը մնաց անփոփոխ: Ասել է գինին թնդացաւ, նրա ալիօօլային աստիճանը բարձրացաւ:

վաշխաւորն—մինչև ցորենը քաղաք տանենք, 10 դուրուշ կը նստի, իսկ դրանից էլ աւելի հիմա ցորեն չէ ծախվում:
— Ես էլ չեմ ծախի... սպասեցէք 10 օր, ձեր փողը կը տամ...
— Ինչէր է խօսում, դուռաց հարկահաւաքը—ես խօքան անգամ չեմ կարող գիւղը դալ 250 դուրուշի համար, շուտ արա, չափի 42 կող ու հաշիւը փակենք, թէ չէ, Աստուած գիտէ, կերթամ տուն-տեղդ կը ծախեմ... շուտ արա:
— Ախր, Հաջօ-աղա—միկտաց գիւղացին—42 կող որ քեզ տամ, էդքան էլ Յովակիմ աղային, էլ տակը ինչ կը մնայ:
— Զէ, ախպէր, խօսեց վաշխաւորն—ինձ ինչու 42 կող տաս, ես խղճի տէր մարդ եմ, շատ-շատ առնեմ, 20 կող կառնեմ... 120 դուրուշի տեղ: Գաւիթը ապշեց, նա սկի էլ չէր կարող մտածել, որ իր մի ոսկի պարտքը կարող է մի տարվայ մէջ 1 1/2 ոսկի տոկոս ծնել:
— Հը, ժպտաց չարամտութեամբ վաշխաւորն—ինչ ես երեսիս նայում. շատ եմ ուղղում... Գիւթիդ չի գալիս տոկոսները տալ... բաս որ այն ժամանակ եկել մղկտում էիր, թէ կնիկդ մերկ է, տղաքը ցրտից մեռնում են, ես չէի թո խղճութեանդ վրա արցունք թափողը և 10 դուրուշանոց կտորը 3 դուրուշով տուողը, հը, ես չէի... գիւղացի էք է՛ք, լաւութիւն էլ չը գիտէք... չէ, ես այսուհետեւ քարասիրտ պիտի լինեմ. թող կտորովէք դուք, ինչիս պէտքն է... հը, ինչ ես առում, 20 կող կը տամ, թէ չէ գնամ քաղաք ու մուրհակը դատարան տանեմ:

